

ՅԱՆՈՒՅՈՒՄՆ.

Առ. 22 Մարտի տարւոյս Ճեմարանիս հանգուցեալ ուսուցիչ Վարդան Արովանի որբերի անունով ստացուած նուէրների գումարն էր ընդամենն 1672 ռուբլի 77 կոպէկ: Առ 28 ապրիլի ստացուեցաւ նոր նուէրներ. ա) իսկեսարաբիոյ և Սոր-Սախիջեանի թեմի կաթարիչ Բարձր. Եուսիկ վարդապետն ուղարկեց առանձին ցուցակով հանդանակած նուէրներ 200 ռուբլի. բ) Արցախու թեմի կաթարիչ Բարձր. Գարեգին վարդապետ Սաթուհեան ուղարկեց առանձին ցուցակով հանդանակած նուէրներ 306 ռուբլի. գ) Մեծ. տիկին Աննա Աթամալեանց իւր նորոգ հանգուցեալ ամուսին հանգուցեալ Միրզա Աթամալեանցի յիշատակի համար Բագուից ուղարկեց նուէր 500 ռուբլի և չ) Վեհափառ Հայրապետի Դիւանից ստացուեցաւ պ. Արդար Եովհաննիսեանի շնորհիւ Թիֆլիսում հանգանակած գումար 250 ռուբլի: Ընդամենը մարտի 22-ից մինչև ապրիլի 28 ստացուած նուէրների գումարն է 1256 ռուբլի որ աւելացնելով մինչ ցայն ստացուած գումարի վերայ՝ յանուն Վարդան Արովանի որբերի ստացուած բոլոր նուէրների գումարն առ 28 ապրիլի տարւոյս կլինի 2428 ռուբլի 77 կոպէ:

Տեսուչ Ճեմարանի՝

Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆ.

ԱԶԳԻՎՈՒՏ • ԱՐԱՐԱՏ • ԱՄՍԱԳՐԻ ԽՐԵԱԳՐՈՒԹԵԱՆ.

Քանի որ անուրանալի փաստ է հնադէտների համար, որ առանց ի մօտոյ ծախթ լինելու հաւաքուած և գտնուած հնութիւնների պեղումների տեղին և գտնողի տեղեկութիւններին՝ դժուար է ճիշտ եղբակացութիւն անել հնութիւնների վերաբերութեամբ. և քանի որ մենք մեր հաւաքած հնութիւնների մի փոքրիկ մասն Աղզիս Վեհափառ Կաթարիկոսին մատուցանելու բաղձն ունեցանք՝ լաւ հասկանալով, որ տեղական հնութիւններն աւելի ցանկալի է Ս. Էջմիածնի թանգարանում ամփոփել՝ քան թոյլ տալ հնութեան տանին, սոյն երկրտոգովս անհրաժեշտ ենք համարում դնել մեր հաւաքած հնութիւնների անուններն, հաւաքման և պատահամբ պեղման տեղերն և մեր ամփոփ տեղեկութիւններն, որպէս զի մեր հաւաքած հնութիւններն ուսումնասիրողը կարողանայ

աւելի ճիշտ եղբակացութեան հասնել դոցա վերաբերութեամբ:

1. ԱնորՋրնեղեղեան դար.

Երկու հարիւր կտորից և քսան տեսակից աւելի քարացած կենդանական և բուսական մարմինների նախնական տեսակներ՝ կրիայ* օձեր, խնուռներ և բոյսեր, որոնք հանուած են Վայոց Ձորի սահմանների մօտ գտնուած՝ Ալմալու, Օղբին, Աղաղեկի Մարտիրոս, Մալիշկա, Իթղաան և Փաշալու գիւղերի կաւային շերտերով բլուրներից, որոնք մօտ լինելով Վայից թափայ՝ հանգած լեռան պարզ ցոյց են տալիս, որ այդ տեղը՝ շնորհիւ հրաբուխի՝ ցամաք է գոյացել, պատճառ դառնալով Ջրային կենդանիների քարանալուն:

2. Բրօնզեան դար.

Մի հատ հին հիթանոսական բրօնզեայ կոթաւոր եռոտանի երկատեղն ձրագ՝ երկայն խողովակներով և զրշաձև հատած ծայրերով՝ (en taille) Գորաղիզ գիւղի մօտ եղած մի բլրակի վերայ, որն ամփոփուած լինելով բարձր սիւնաձև պատուանդանի վերայ՝ գտնուել է տասն արշի-նաչափ խորութեան մէջ: Բրօնզեայ վղնոց, միապաղաղ Բաղկեդոնիկ քարից (Agate calcédonique) տերեւադրոյժ՝ քանդակով մատանի, զանազան յուշանքների, աէգ, վեց կտոր անյայտ գործիքների, ինչպէս և բրօնզի կտորներ և մի հատ բրօնզեայ դրամ՝ աստղանշան և գուցէ՝ ասորական տառերով:

3. Նախաքրիստոնէական դարերից.

Վեց հատ կաւեայ անօթներ՝ կարմիր և սև գոյներով նկարուած, որոնցից մէկը շատ մեծ (սուրահի ձևով, դաւաձև), երկուսն բոլորշի խոր գաւաթաձև, մէկը ճոռաւոր դաւաձև, միւս երկուսն կանթեղաձև, որոնցից ունկաւոր գաւաթաձևն գտնուած է կապաշտական գերեզմաններից կարմիր վանք կոչուող մենաստանում, որն նախօրօք մեր կարծիքով՝ Արծրունեաց գղեական լինելով, ինչպէս ցոյց է տալիս շրջապարսպի ձևն և աւագ դրան ճաւառի զինադրօշն (արծիւ՝ մաղիկները խրած ոլխարի մարմնի մէջ). շատ հաւանական է, որ դեռ շատ հնութիւններ է պարունակում իւր մէջ այդ վանք—գղեական իւր շրջակայքով, որին իբր ապացոյց կարող է լինել այն, որ Մոսկուայի Հնագիտական Ընկերութեան անդամ պ. Փէօդորովն գտել է այդ տեղից կաւեայ ար-

* Պէտք է նշադրել, որ քարացած խոշոր տեսակի ծովային-աստղ է: Ժ. Խ.

ձան, բաւական թուով բրօնզեայ դաշոյներ, ա-
նօթներ և այլ նմանակէս և «Լայոյ Զոր» որտե-
ղից մեր ենթագորութեամբ, Ազէքսանդր Մակե-
դոնացին անցած լինելով, ամեն ազգի տարազի
զէնքերի, իրեղենների և դրամների առատ
աւար թողած պիտի լինի։ Վեց հատ դրամ
զրադաշտական, երեք հատ Արշակունեաց—
Պահլաւանի, երկու հատ հեթանոսական և
տասն հատ հին արարական քիւֆի տառերով,
բոլորն էլ արծաթ։ Նոյնպէս հետեւեալ պղնձի
դրամները. մի հատ անյայտ՝ կռօքի պատկե-
րով, չորս հատ հին արարական ձկակիր, եր-
կուն երկարաձև, վեց հատ թռչնակիր՝ սի-
րամարդ, բազ, ջալլամն, հնգկահաւ, կաքաւ,
մի հատ երկայնաձև՝ սրակիր, ութն հատ
կենդանակիր՝ փղի, ուղտի, բորենու, այծի,
ցլի, նապաստակի և եղջերուի նկարներով,
մէկ հատ աստղակիր՝ զուցէ՝ ասորական տա-
ռերով և մի հատ քիւֆի տառերով և կարի-
ծի նկարով։

4. Բրիտանական դարերից։

Մի հատ զրադէր մագաղաթեայ Մանր
ուսմունք՝ առանց յիշատակարանի. երկու
հատ արծաթի և երկու պղնձի դրամներ, ո-
րոնցից մէկը՝ Խաչադրաց ժամանակի, մէկը
հռովմեական, մէկը յունական, իսկ միւսը
հայկական՝ Հեթում թագաւորի ժամանակից։

Վերջացեալ ենք երկտողս սոյն համաստ
կարծիքով, որ աւելորդ չէր լինի, եթէ Ս.
Էջմիածնի կողմից մի հնագէտի յանձնարար-
ուէր շրջակայքի հնութիւնները Ս. Էջմիած-
նի թանգարանի համար ժողովել, որոնցից
շատ շատերն, սեփական փորձերից զիտելք,
շատ շնչին դրամով կարելի է գնել իւր տե-
ղում, քանի՜ կը հասնէր Եւրոպական ճա-
նապարհորդ—հնագէտ և առաւել թանգովձա-
րով կը հաւաքէր մեր կողմերից հեռացնելու հա-
մար այն հնութիւններն, որոնք աւելի յար-
մար են իրենց տեղումն ուսու մնասիրելու հա-
մար։

Աղէքսանդր Տէր Սարգսեանց։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ.

Ներկայ յօդուածս առաջարկում եմ
հայ Օրացոյց կազմողների ուշադրութեան և
յուսով եմ որ իմ այս մի քանի նկատողու-
թիւններն առիթ կաան մասնագէտին աւելի
ևս քննել և լուսարանել այս հարցը Խօսքս
յատուկ անունների դրութեան մէջ պատա-
հող սխալների մասին է, որոնք ոչ թէ պատա-
հական կերպով, իրեւ տպագրութեան վրի-
պակ, աչքի են ընկնում այլ տարեշտարի մը-
նալով Օրացոյցներում այսօր այնքան են շա-
տացել և աղաւաղել ուղղագրութիւնը,
որ շատ անգամ մարդ հաւատալ չէ ուղում
թէ այս ինչ անունը յունական այն ինչ անուանն
է համապատասխան։

Դժբաղդարար այսպիսի կոպիտ սխալներ,
որոնք մեզ ռուսահայերիս համար սովորա-
կան են դարձած, այսօր կրկնուում են և Ե-
րուսաղէմում տպագրուած Օրացոյցների մէջ,
ուր տպագրական գործին և լեզուի վերա-
բերեալ օրէնքներին կարծես թէ աւելի ու-
շադրութեամբ են վերաբերում։

Իհարկէ, ես այստեղ մի կողմն եմ թող-
նում յատուկ անունների այն ուղղագրու-
թիւնը, որը հեռանալով տրամակրիպիսիոնի
ընդհանուր կանոններից, կարելի է ասել, դա-
րերի ընթացքում քաղաքացիական իրաւունք
է ստացել, կամ որը ենթարկուելով լեզուի
որոշ հնչական կանոններին, փոխել է իւր
ուղղագրութիւնը. բայց ցաւ ի սիրտ պէտք
է ասել, որ այս սխալներն առաջ են եկած
լոկ աղիտութիւնից մի անգամ և հիմայ մենք
անտարբեր վերաբերուելով հարցին, այս մի
անգամ արած սխալները կրկնում ենք և
կրկնում Օրինակ, մի անգամ ընդունուած է
գրել Դաւիթ և ոչ Դաւիդ, ինչպէս որ պէտք էր.
Թաթուլ և ոչ Թագուլ (Θεοδύτης), Նուեն և
ոչ Նիւեն, Կոստանդիանոս և ոչ Կոնստանտի-
նոս Աթանաղիոն և ոչ Աթենոպիւնէ, Բազարատ
և ոչ Պազգրատ և ուրիշ, սրանք այսպէս էլ
պէտք է մնան. հարցն ուրեմն աղիտութիւնից
առաջ եկած սխալների մասին է, Ահաւասիկ
այս սխալները, որ իմ կարծիքով պէտք է ուղ-
ղագրուին։